Լրացուցիչ հիմնավորումներ

2017թվականի «Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օգտագործման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպում» ծրագրի

Թեպետ և ՀՀ ֆինանսների նախարարի 27.02.2017 թ. N 05/1614-17 գրությամբ բարձրացված հարցերի մեծ մասի պատասխանները բխում են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված «Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օգտագործման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպում» ծրագրի բովանդակությունից, այնուամենայնիվ ստորև ներկայացվում է ծրագրով նախատեսված որոշ ծախսային հոդվածների լրացուցիչ հիմնավորումները:

Ինչպես նշված է եղել վերը նշված ծրագրի.

<u>I բաժնում</u>՝ «Գույքի պահառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 10-ի N 1033-Ն որոշմամբ այդ նպատակով ՊՈԱԿ-ին հատկացված՝ Երևան քաղաքի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում» *(16100 մ² մակերեսով հողատարածք և 2386,5 մ² մակերեսով շենքեր ու շինություններ)*,

<u>VIII բաժնի 10-րդ կետում</u>՝ «պահառության տարածքը նախկինում հանդիսացել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական բազա և 2015 թ. ՊՈԱԿ-ին է հանձնվել ծայրաստիճան անմխիթար վիճակում»

<u>V բաժնում</u>՝ «2016 թ. նույնաբովանդակ Ծրագրով նախատեսված է եղել կազմակերպել միաժամանակ միչև 150 միավոր տարատեսակ Գույքի պահառություն, ինչի համար նույն թվականին իրականացվել էին.

. . . . . .

- պահառության տարածքի (*16100 մ² մակերեսով)* մի մասի մաքրում (հարմարեցում)՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար *(1 ավտոմեքենայի կայանման համար անհրաժեշտ է 15 մ² տարածք, իսկ 150 ավտոմեքենայի համար անհրաժեշտ է 2250 մ² մակերեսով կայանատեղի)*,
- պահառության տարածքի (*16100 մ² մակերեսով)* մի մասում (*2250 մ² մակերեսով կայանատեղի*՝ նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) արտաքին գիշերային լուսավորության համակարգի տեղադրում,

➢ պահառության տարածքի (16100 մ² մակերեսով) մի մասում (*2250 մ² մակերեսով կայանատեղի՝* նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) շուրջօրյա տեսահսկման համակարգի տեղադրում:»

VIII բաժնի 9-րդ կետում՝ «Պահառության տարածքում 2016 թ. համար նախատեսված ամսեկան միջինը 150 միավոր պահառվող գույքի փոխարեն 2017 թվականին նախատեսվում է պահառության ընդունել միջինը 400 միավոր (01.01.2017 թ. դրությամբ այդ քանակն արդեն կազմում էր 317 միավոր), ինչի համար անհրաժեշտ է կատարել պահառության տարածքի *(16100 մ² մակերեսով)՝* տրանսպորտային միջոցներ հանդիսացող գույքի կայանման համար նախատեսված հատվածի *(2250 մ² մակերեսով կայանատեղի)* ընդլայնում *(1 ավտոմեքենայի կայանման համար անհրաժեշտ է 15 մ² տարածք, իսկ 400 ավտոմեքենայի համար անհրաժեշտ կլինի 6000 մ² մակերեսով կայանատեղի)* (ինչը հիմնականում կառաջացնի նյութերի և պարագաների լրացուցիչ ծախս), ինչպես նաև ավելի քան 2 անգամ *(իրականում՝ ավելի քան 2,6 անգամ)* ավելացնել տեխնիկական միջոցներով (գիշերային լուսավորություն, տեսահսկման համակարգ և այլն) կահավորման ենթակա՝ գույքի տեղակայման տարածքի մակերեսը (ինչի հիմնականում կառաջացնի արտաքին գիշերային լուսավորության 10 նոր կետերի և շուրջօրյա տեսահսկման 5 նոր կետերի տեղադրման լրացուցիչ ծախս):

1) 2016 թվականին պահառության տարածքում *(2250 մ² մակերեսով կայանատեղի)* տեղադրվել էր արտաքին գիշերային լուսավորության 16 կետ, ինչի համար կատարված ծախսը կազմել էր 1278.2 հազ. ՀՀ դրամ, հետևաբար 1 նոր կետի տեղադրման համար կպահանջվի 79888 ՀՀ դրամ, իսկ լրացուցիչ տեղադրման ենթակա (*6000 մ² մակերեսով կայանատեղում)* գիշերային լուսավորության 10 կետերի համար ընդհանուր ծախսը կկազմի 798.8 հազ. ՀՀ դրամ:
2) 2016 թվականին պահառության տարածքում *(2250 մ² մակերեսով կայանատեղի)* տեղադրվել է արտաքին շուրջօրյա տեսահսկման 10 կետ, ինչի համար կատարված ծախսը կազմել էր 1000.0 հազ. ՀՀ դրամ, հետևաբար 1 նոր կետի արժողությունը կկազմի 100.0հազ. ՀՀ դրամ, իսկ լրացուցիչ տեղադրման ենթակա (*6000 մ² մակերեսով կայանատեղում)* շուրջօրյա տեսահսկման 5 նոր կետերի համար ընդհանուր ծախսը կկազմի 500.0 հազ. ՀՀ դրամ:»

Այսպիսով, ծրագրով ամենևին էլ չի նախատեսվում ավելացնել ՀՀ կառավարության 10.08.2015 թ. N 1033-Ն որոշմամբ ՊՈԱԿ-ին հատկացված 16100 մ² մակերեսով տարածքը, այլ ընդամենը նախատեսվում է այդ տարածքի՝ 2016 թ. որպես կայանատեղի օգտագործվող՝ 2250 մ² մակերեսով հատվածը 2017 թ. ընդլայնել մինչև 6000 մ², այն բարեկարգելով և կահավորելով համապատասխան տեխնիկական միջոցներով:

Դրանով է հիմնավորվում «մասնագիտական ծառայություններ» (1,298.8 հազ. դրամ) հոդվածով նախատեսվող լուսավորության նոր 10 կետերի և շուրջօրյա տեսա-

հսկման նոր 5 կետերի քանակների, ինչպես նաև «կենցաղային նյութեր» հոդվածի գծով (840.0 հազ. դրամ) ձեռք բերվող նյութերի անհրաժեշտությունը:

Դրանով է հիմնավորվում նաև 2016 թ. հաստիքացուցակով սահմանված թվով 4 պահակներից բացի ևս 4 նոր պահակների հաստիքների քանակը, քանի որ շուրջօրյա հերթափոխային ժամանակացույցով (միմյանց հաջորդաբար փոխարինման սկզբունքով) աշխատող 4 պահակների դեպքում սփորաբաժանումում յուրաքանչյուր պահին հերթապահում է միայն 1 պահակ, ինչպիսի պայմաններում անհնարին է ապահովել և՛ ամբողջ պահառության տարածքի (16100 մ^2 մակերեսով հողատարածք և 2386,5 մ^2 մակերեսով շենքեր ու շինություններ) *և՛ հատկապես տրանսպորտային միջոցների կայանման հատվածի* (6000 մ^2 մակերեսով կայանատեղի) *պատշաճ վերահսկողությունն ու պահպանությունը:*

Պահակային ծառայության աշխատողների հավելավճարի անհրաժեշտությունը բխում է ինչպես նրանց աշխատանքի բնույթից (շուրջօրյա հերթափոխային ժամանակացույցով՝ միմյանց հաջորդաբար փոխարինման սկզբունքով), այնպես էլ արտաժամյա, գիշերային ժամերին և հանգստյան օրերին (ներառյալ՝ հիշատակի ու տոն օրերը) նրանց կողմից կատարվող աշխատանքի համար ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հավելումների չափերից: Ընդ որում առաջարկվող հավելավճարի չափը հաշվարկվել է հիմք ընդունելով օրացուցային տարվա ընթացքում յուրաքանչյուր աշխատողի կողմից արտաժամյա, գիշերային ժամերին և հանգստյան օրերին (ներառյալ՝ հիշատակի և տոն օրերը) կատարվող աշխատանքի մոտավոր տևողությունն ու դրա համար հասանելիք՝ նրանց հաստիքային աշխատավարձի նկատմամբ կիրարվող տարբեր հավելումների գործակիցները (արտաժամյա կատարվող աշխատանքի համար՝ 50%, գիշերային ժամերին կատարվող աշխատանքի համար՝ 30% և հանգստյան օրերին /ներառյալ՝ հիշատակի և տոն օրերը/ կատարվող աշխատանքի համար՝ 100%):

Ինչ վերաբերվում է էլեկտրագետի աշխատավարձի նկատմամբ հավելավճարի կիրառմանը, ապա դա բխում է ՀՀ կառավարության 02.12.2010 թ. N 1698-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «IV. Էներգետիկա» խմբի «I. Էներգետիկա» բաժնի 16-րդ կետի պահանջներից, քանի որ պահառության տարածքի հետ միասին ՊՈԱԿ-ին է ամրացվել նաև դրանում գտնվող էլեկտրական տրանսֆորմատորային ենթակայանը, որը պարունակում է էլեկտրական բաց բաշխիչ սարքեր:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման
Գործակալություն» ՊՈԱԿ

Գլխավոր տնօրեն *Ս. Ստեփանյան*